

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 ֆր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Իրկու թիւ մեկ ծաւրով

Տարեկան . . 14 ֆր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 ֆր.

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ

Դրամաշնորհ տուիր


20 շաբաթ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Ipravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ

չեմ տրոշիր

ԹԻԱՊԱՐՏԸ

Մեր քերթովը . . . ԹԻԱՊԱՐՏԸ՝ գորքիչ օրէն գրքի ձեռով հրապարակ կը հանենք, երկու հատորէ պիտի բաղկանայ:

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆԸ Զ ՖՐԱՆՔ Է

Ստանալ փափաքողները այդ երկու ֆրանքը այժմէն խրախոսեալներն իրենց համարը ըլլալ քէ ԹԻԱՊԱՐՏԸ կազմուած երկու հատորները քիչ առեւեկէ կատարուան: Այս պատիկ գումարը մեզ հասցնելու դիմումներն համար կը յայտարարենք քէ փոխարէնը 10 Ե/Ս զեղնով առեւեկ երկրի նամակագրով կը կրնան ինքն ինքն:

ԹՐԲԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԲԱՐԻՉ, 3 Դեկտեմբեր

Կ. Պոլիս, 30 Նոյեմբեր. — (Էսթ-Ուէսթի զլխաւոր թղթակցէն):

Սուլթանը մէկ կողմէն նկատի առնելով Մակեդոնիոյ այժմեան անկարգ և անտանելի դրութիւնը, միւս կողմէն անսալով պետութեան ներկայացուցիչներուն խօսքերուն ու խորհուրդներուն, զբաղած է յանձնարարելու մը կազմելու խնդրով: Այս յանձնարարին պաշտօնը պիտի կայանայ Մակեդոնիոյ համար խոստացուած բարեկարգութիւններուն իրագործումին վրայ հսկելուն մէջ, կլմանալ թէ այդ յանձնարարին գործառնութիւնը պիտի գրուի Գրեքիոյ նախկին կառավարիչ՝ Ֆերիտ փաշայի նախագահութեան տակ. ասոր իբր օգնական պիտի ծառայէ բարձրաստիճանի զինուորական մը, որուն անունը դեռ յայտնի չէ պաշտօնական շրջաններու մէջ:

Բարենորոգութեանց անմիջական գործադրողը կարգուած է Եւմէնի նախկին վարչին՝ Հիւսէյին Հիւսի փաշայ:

Մենք շատ վստահութիւն չենք կրնար ընծայել թուրք կառավարութեան այս ծրագիրներուն և ցոյց տուած փութկոտութեան, որովհետեւ ասով Սուլթանը փոշի փչել կուզէ դիւանագիտութեան շնորհիւ: Այսպիսի ծրագիրներ ուրիշ անգամներ ալ սեղանի վրայ

գրուած են— օրինակ՝ հայկական նահանգներուն համար— բայց գործադրութիւնը բարձի թողի եղեր է, ինչպէս կը լինի թրքական գրեթէ բոլոր գործերը:

Կըսուի թէ Սուլթանը Ռուսիոյ ազդարարութեանց անսալով բարենորոգումներու ճամբուն մէջ մըտնելու ուզած է, հակառակ ուրիշ պետութեան մը որ իր քաղաքականութեան համեմատ Սուլթանին ուրիշ բան կը թելադրէր:

* * Առաքիայէն եկած լուրերը դարձեալ սրտնեղութիւն կը պատճառեն Սուլթանի կառավարութեան: Նաճատի կամ Նէճէտի կիսավախ և կիսավայրենի բնակչութիւնները՝ զանազան ցեղապետներու կամ ինքնակոչ մարգարէներու առաջնորդութեամբ, նորէն ոտքի ելած են և, և որոց խուլ ընդհարումներուն լուրը մինչեւ կառավարութեան ականջը հասած լինելով՝ սարսափեցուցած է: Յայտնի է թէ այդ ցեղերը՝ և մինչեւ Գուէթի իշխանութիւնն ալ մէջն հաշուելով՝ Անգղիոյ դասալիքներն են, և Ալբանիոյ իր ուզած ժամանակը զանոնք ոտքի կը հանէ՝ կարծես մոգական ցպիկի մը շնորհիւ, և ուզած ժամանակ կը հանդարտեցնէ... Ամենավերջին տեղեկութեան համեմատ, որ դեռ կիսկատար է, որովհետեւ մանրամասնութիւնները դեռ կը պակսին, Նէճէտի արապները յարձակած են կառավարի մը վրայ որ հաւաքուած տուրքերու ահագին գումար մը կը փոխադրէր

և ունէր նաեւ Պատրիարքի շրջակայքը գտնուող կալուածներու եկամուտները: Բոլորիկ գիմագրութենէն է մը իր տոյ կառավարը կը նուաճուի և բոլորովին թալանի կը տըրուի:

Մէկ կողմէն Առաքիոյ ապստամբութիւնը, միւս կողմէն թալանութիւնն առաջ եկած դրամի կորուստը, սաստիկ մտատանջութեան մէջ ձգած են Ապտիլ Համիտը և այս պարագայներուն մէջ զարմանալի չէ որ նա փութկոտութիւն ցոյց կուտայ Մակեդոնական խնդրոյն կորցող ունէն մէջ:

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ՕՐՈՒՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Մակեդոնական խնդրոյն հրատապ այժմեութիւնը— գործնախորդ ամսոյ մէջ Զօնչէվ-Միխայիլովսկի գօմիթէին կազմակերպած հրոսախուժները սեղանի վրայ դրին— Եւրոպական Դիւանագիտութիւնը և մամուլը կը շարունակէ ծանրապէս զբաղեցնել: Անընդհատ հալածանքի, չարչարանքի ենթարկուած, ու հաւանական կոտորածի մը պակուցումովը համակուած բնակչութեան մը արդար պահանջմանցը փողահար գօմիթէներու ապստամբական շարժումները զսպելու համար՝ Սուլթանին անսահման իշխանութիւն տուող նոյն այդ Եւրոպայի պետութիւնները, այսօր ալ իրենց քաղաքականութեան զեկը դարձնել կը ձեւացնեն: Կը կարծեն թուրքիոյ տառապող քրիստոնեայ ժողովուրդներու ի նպաստ իրենց պարտաւորութիւնը կատարած ըլլալ՝ ստիպելով Սուլթանը որ Մակեդոնիոյ մէջ բարեկարգութեանց գործադրութիւնը հուշակող նոր իրաւունք հանէ: Իրաւ ալ, տեսակ մը հպարտութեամբ է որ օտար թերթերը իրենց սինակներուն մէջ կը հրատարակեն Մակեդոնական նոր բարեկարգութեանց մանրամասնութիւնները:

այս նոր բարեկարգութեանց համաձայն: Մակեդոնիոյ կուսակալները պիտի ձեռնարկեն տեղային ոստիկանութեան կազմակերպութեան մասնակից ընել հաւասարապէս միւսիմաններն ու քրիստոնեաները, վերջիններուն չզրահալով նոյնիսկ ոստիկանական բարձր պաշտօնները:

Նոյնպէս, Մակեդոնիոյ դատարանները, նոր հիմնուած վրայ ու տեղային պահանջմանց համաձայն՝ պիտի բարեկարգուին եղեր, ու իր պարտականութեանցը մէջ թերացող ամէն դատաւոր խիստ պատիժներու պիտի ենթարկուի եղեր: Վերջապէս, բարեկարգութեանց Ընդհանուր քննիչ մը կը նշանակուի, որը Մակեդոնիոյ կուսակալին յատկապէս վարդաբալ բարենորոգմանց անթերի գործադրութիւնը մօտէն ապահովելու պաշտօնով, մինչ Բ. Դրան մէջ երեք անձերէ բաղկացած գերագոյն ժանձնաժողով մը նկատողութեան պիտի առնէ կուսակալներու և ընդհանուր քննիչին տեղեկագիրները ու խնդրոյն դարձուածքներուն մասին Եւրոպայի ու հաւատացեալներու Հրամանատարը ծանօթութեան մէջ պիտի պահէ:

Ինչ աղուոր խոստումներ: Բայց, այս բոլորը հալած իւղի պէս կը լինի — կամ այնպէս ձեւացընող — Եւրոպացի դիւանագետները — որոնք այս բարեկարգութեան քիւնքի մասին զոհոնակութեամբ ձեռքերնին չփշփելու երեւոյթը ունին — պարտաւոր էին յիշել թէ նոյն այդ բարեկարգութեանց իրաւունքներով էր որ նոյն այդ Սուլթանը կազմակերպեց ու գործադրեց հայկական նահանգներու կոտորածները: Եւրոպայի դիւանագետները պարտաւոր էին յիշել մինչեւ այժմ թուրքիոյ քրիստոնեայ բոլոր ցեղերու նկատմամբ Սուլթաններու հետեւած քաղաքականութիւնը: ամէն անգամ որ տառապեալ ժողովուրդի մը հեծեծանքի աղաղակը շատ բարձր հնչած է ու Եւրոպան, հակառակ իր անտարբերութեանը ձայն բարձրացնել հարկադրուած է, Դուռը ու Սուլթանը փութացած են բարեկարգութեանց շքեղ իրաւունքներ հանել

ի մայն փողոց եւ քաղաքի, աչք պատրելու եւ խնդիրը քննարկելու համար ժամանակ չահելու գիշերու մով միայն: Այսօր, պետութեանց քիչ թէ չատ սպառնական գիրքին առջեւ, Դուռը նոյն հնարին վե-
րըստին կապաւինի. բայց գոնէ այս անգամ պետութիւնները պիտի գիտնան, պիտի ուզեն յարգել տալ վերջապէս տարիներէ ի վեր խօստացուած ու միշտ յետաձգ-
ուած այդ խօստումները. տարու-
կուսելի է: Այս առթիւ, թաւն, մասնաւոր խմբագրականի մը մէջ կըսէ. «Յրանսական Հանրապետու-
թեան արտաքին գործերու նախա-
րարը, պատասխանելով Պուլկա-
րիոյ վարմունքին մասին օսման, եան բողոքներու, յարեց թէ ի զուր
իշխանապետութիւնը մեղադրանքի պիտի ենթարկուէր իր արեւա-
կիցներուն հետ թագուն մեղապա-
ցութեան մը մէջ ըլլալուն համար, երբ միւս կողմէ Մակեդոնական
ժողովուրդին տնտեսիները արմա-
տէն չեն կտրուիր: Աստորիա ու
Ռուսիա չէր սղորեցան Սալիտ բա-
շարի ու անոր տէրովը ուշադրու-
թիւնը հրաւիրել այդ նահանգնե-
րու ողբեր վիճակին վրայ, այդ
տեղերը Պեպլինի դաշնագիրը գոր-
ծադրելու անհրաժեշտութեան վրայ
ու փոխանակ մեծագուռ բարենո-
րոգմանց՝ գործնական, համեմատ,
ազգու բարեկարգութեանց ձեռ-
նարկելու, ինչպէս մանաւանդ իր
ժողովուրդին փտահութիւնը վա-
յելող ընդհանուր կառավարիչ մը
ընտրելու: Ոչ Անգլիա, ոչ Իտա-
լիա մերժեցին այս իմաստուն նա-
խաձեռնութեանց իրենց գործակ-
ցութիւնը: Միայն Գերմանիա բա-
ցասական մեկուսացումի մը մէջ
ամփոփուած էր. ան ալ վերջը
վերջը պարագաներու ծանրութիւնը

զգալով, քիչ մը ուշ՝ իր պիտիւր
հաշուի առաւ:
«Դուռը մտիկ քրաւ — ինչպէս
միշտ մտիկ կրնէ, ինչպէս կարելի
չէ որ մտիկ չընէ — Եւրոպայի
միաձայն փոփոքը ու բաւն մը
փորձել կեղծեց. այս ալ առաջին
քայլ մըն է: Պիտութեանց միւս
թեմէն ու ազգութեանց կախում
ունի որ անկէ լուրջ յառաջգիւ-
թիւն մը խլին»:
Տ. Է.

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ֆիլիպի, 24 Նոյեմբեր

Ամսոյն 16ին, չարաթ երեկոյ,
տեղւոյս Հնչակեան Մանածիկին նա-
խաձեռնութեամբ, Ուշիթէ լոքա Տրու-
պայի սրահին մէջ բանախօսեց Ամե-
րիկայի Հնչակեան հանրաձայնօթ գոր-
ծիչ՝ Տ. Գ. Չիթճեանը՝ նիւթ ունեւա-
լով «Մեր երազին Հայաստանը ու
ազգային ներկա՝ դաւանանքը»:
Սրահը լիցում էր: Հնչակեան,
Դաշնակցական եւ ոչ-կուսակցական
խումբն բազմութիւն մը փութացած
էր ներկայ գտնուել այս օգտաշատ
բանախօսութեան, որ երկու ժամ
տեւեց, եւ որուն միջոցին հասարա-
կութիւնը, պէտք է խոստովանի,
անսովոր կարգապահութիւն մը եւ օ-
րինակելի հանդարտութիւն մը ցոյց
տուաւ, յաճախ իր ուժգին ու գիտա-
կից ծափերով ընդմիջելով բանախօ-
սութիւնը, եւ արագէտ ցոյց տալով իր
հաւանութիւնը բոլոր այն ճշմարտու-
թեանց եւ անվիճելի իրողութիւննե-
րուն՝ զոր յարգելի բանախօսը երե-
ւան բերաւ այնքան ներհուն, ան-
կողմնակալ եւ պերճախօս եղանակով:
Տ. Չիթճեան մասնաւորապէս հոգ տա-
րաւ որ իր բացատրութիւնները եւ իր
սահմանումները հաւասարապէս հաս-
կընալի ըլլան թէ՛ զարգացածներուն
եւ թէ՛ անուս դասակարգին համար:
Բացատրեց թէ ինչու համար եւ ինչ

անխուսափելի պարագաներու անմի-
ջական ազդեցութեան ներքեւ՝ մեր
յեղափոխական կազմակերպութիւն-
ները չեն կրցած իրենցմէ սպասուած
արդիւնքը տալ. փափաքուած բարձ-
րութեան մէջ մնալ եւ ազդել հանրա-
յին յեղափոխական բարոյականին
վրայ, ներշնչել արժանացուած փտա-
հութեան մը եւ անխախտ հաւատք մը
դէպ ի Յեղափոխութիւնը եւ դէպ ի յե-
ղափոխականները: Ըստ թէ ազատու-
թիւն մը մտաբանի մէջ, ճակատա-
գրականօրէն համակերպուուն եւ մոր-
թուելուն մէջ արժանիք չկայ. եւ ա-
տով օտարներուն ոչ թէ համակրանք
այլ, շատ շատ, տրգահատանք մի-
այն ապահոված կրկնաճ մեղք. ա-
ռանց զոհողութեան ազատութիւն
չկայ. եւ, յարեց. «եթէ ես ըլլայի
ազատութիւններու բաշխիչ, հաւա-
տացէ՛ք որ չպիտի ուզէի երբէք ո՛րեւէ
ազատութիւն տալ ժողովուրդի մը,
որ արժանի չէ եղած անոր: Ազգը,
ըսաւ, ամբողջովին պէտք է որ յե-
ղափոխական գործին ներքեւ մտնէ,
անտարբերները, չէզոքները պէտք է
խմբուին ո՛րեւէ կուսակցութեան մը
չուրջը եւ իրենց կարողութեան հա-
փով աշխատին մօքքելու յեղափոխա-
կան շարքերը կարգ մը մակարոյներէ,
որոնք յեղափոխականի դիմակին տակ՝
ժողովուրդին արիւնը կը ծծեն»:
Թէեւ Հնչակեան, Տ. Չիթճեան անկեղծօ-
րէն յայտարարեց, կուսակցական գոե-
հիկ նկատումները վեր բարձրանալով,
անկաշկանդ ու անվերապահ ոգիով
թէ Հնչակեան շարքերուն մէջ գրա-
նուած են խաչադողներ, զաւաճան-
ներ, ազատ ու անորակի թարքե-
րու տէր արարածներ, որոնք ամեն
կարելի միջոց ի գործ դրած են խախ-
տելու համար ժողովուրդին յեղափո-
խական հաւատքը. սակայն, յարեց,
անուրանալի է նաեւ սա միսթտա-
կան իրողութիւնը թէ՛ Հնչակեան
կուսակցութիւնը այդպիսիներուն հա-
մար միշտ անողորմ գտնուած է, միշտ
դէպի մաքրագործում ձգտած է: Ան-
վախօրէն, առանց վարանելու, հա-
մարձակ ձեռքերով, կտրած նետած է
իր մարմինն փտութիւնները, ու ա-
տով իսկ, այդ ուղիղ եւ համարձակ
վարմունքին համար՝ հալածուած, պա-

ռակտուած ու միշտ փոթորկալից չըր-
ջաններէ անցած է: Ու ես, ըսաւ,
որ անոր փառքի օրերը ճանչցած եմ
այնքան մօտէն, անկուսի շրջանին
մէջ մանաւանդ անխախտ հաւատա-
րութեամբ փարեք մնացեք եմ անոր,
վասն զի համոզուած եմ թէ Հնչակեան
կուսակցութիւնը, ինքզինքը մաքու-
րործելու այս ուղղութեամբ, իր մէջ
կը պարունակէ հայրենիքի ազատու-
թեան կորիզը, ու կանխաւորէ հե-
տեւաբար, հայ ազատագրութեան
գաղութ, որ ամէն բանէ առաջ կը պա-
հանջէ զոհողութիւն, յարատեւութիւն
եւ մաքուր գործունէութիւն:
Վստահեցէք, ըսաւ, այն կուսակ-
ցութեանց, որոնք մաքրագործումի
ճամբուն մէջ քալած են միշտ, ա-
ռանց ազդեցելու, տմբոխին անգի-
տակից մեղադրանքէն եւ առանց կանգ
առնելու ամէն կողմէ յարեցառած խո-
չընդոտներու առջեւ: Ի. Կ. յարեց,
պէտք է կասկածանքով վերաբերուիլ
բոլոր այն կուսակցութեանց նկատ-
մամբ՝ որոնք ինքզինքնին անխախտ կը
կը դաւանին, որոնք կուսական խա-
չազդեցութեւ, մասնիկներու, մակա-
բոյժներու գոյութիւնը իրենց մէջ,
որոնք չեն ընդունիր երբէք կատա-
րեագործուելու եւ մաքրագործուելու
անհրաժեշտ հարկը, եւ այդ կերպով
մեծապարկ լըլլան թէ հանրային բա-
րոյականին եւ թէ յեղափոխական գա-
ղափարին վասն զի, տարրական ողջ-
մտութեան հակառակ պիտի ըլլար
պնդել թէ դարաւոր ստրկութեան մը
մէջ իր սղղային նկարագիրը կորսն-
ցուցած ժողովուրդի մը ծոցէն կարելի
է դուրս հանել անապառաճ ու մաքուր
յեղափոխական կազմակերպութիւն-
ներ:
Տ. Չիթճեան խանդավառ ծափերու
մէջ աւարտեց իր բանախօսութիւնը,
ընդունելով շնորհաւորութիւնները
ներկաներուն, որոնք մեկնեցան ժո-
ղովարանէն՝ բարեբար տպաւորութեան
մը ներքեւ:
...

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ (35)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԼՈՒՍՐԱ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ

— Ձայնդ կտրէ՞... եթէ ոչ մեծ կտորդ՝ ականջդ
կը թաղում, հրամայեց Վանական:
Առաքել էֆէնտին գողգղալով Վանականին երեսը
նայեցաւ ու լռեց:
— Ըսէ՛, վա՛տ, դո՛ւն էիր Վազգէնը մատնողը,
դո՛ւն էիր Կեմ գեղի ուսուցիչը մատնողը, հարցուց
Վանական խոռովայնոյդ ու վրէժխնդրական ձայնով
մը:
— Ես չէի... կմկմաց Առաքել էֆէնտին: Ես մէկը
չեմ մատնած:
— Սուտ կը խօսիս, դաւաճա՛ն, միթէ՞ դո՛ւն չես
Առաքել էֆէնտին:
— Ես ե՛մ...
— Դուն չե՞ս նուրիսաննեց փեսան:
— Այո՛:
— Լաւ ուրե՛մն, սո՛ւտ է որ դո՛ւն մատնած ես
ըսած մարդերս, որոնք երկու ամիսներէ ի վեր

բանտը կը դանտին. սո՛ւտ է որ դո՛ւն լրտեսու-
թեամբ կապիրս ու շարաթը չըստ անգամ վանքին
Սրբազանը քննելու կուգաս: Թշուառական... միթէ՞
դո՛ւն խիղճ չունիս, միթէ՞ դո՛ւն հայ չես... միթէ՞
քու երակներուդ մէջ սառեր է ազգիդ արիւնը:
Ըսէ՛, պատասխանէ ինձի... ահա՛ Արդարութիւնը
քու դէմդ կը հանէ զիս ու կըսէ. «հրէ՛շ, ա՛լ պէտք
չէ որ ապրիս»...
Ու կատաղի յարձակումով մը ձեռքին դաշոյնը
պիտի խրէր Առաքել էֆէնտինին սիրտը, ահա՛ մէկը
թեւէն բռնեց ու գոչեց.
— Կեցի՛ր...
Վանական ետին դարձաւ ու տեսաւ Լուսիան՝ որ
կըսէր.
— Չէ՛, մի՛ սպաններ այդ վատը:
— Ի՞նչու համար, հարցուց Վանական: Չէ՞ որ
դաւաճան մըն է... չէ՞ որ իր ձեռքը անմեղ արիւն-
ներու մէջ թաթխած է... չէ՞ որ Աստուծոյ ու մար-
դերու առջին անիծեալ մըն է ան:
— Ծշմարիտ է... իրաւունք ունիս... բայց այդ
դաւաճանին ըսենք. «Գնա՛ ու խիղճիդ ձայնը մի՛
խղեր... գնա՛ ու ասկից ետք քու Աստուծոյ մի՛
ուրանար...» չեչտեչ Լուսիա վեհութիւն մը գնե-
լով իր ձայնին մէջ:
Վանական բոլոր մարմնովը ցնցուեցաւ: Իրեն ա-
նանկ եկաւ որ Լուսիա երկինքէն իջած բարու-
թեան հրեշտակն էր, որուն ձայնը կը լեցունէր հո-
գին ու սիրտը:
Վայրկեան մը մտածեց ու յանկարծ գոչեց.
— Անի՛ծած... լսեցի՛ր ընկերոջս ըսածները:
— Լսեցի՛ր... թոթովեց Առաքել էֆէնտին՝ մաք-

դու մը պէս, որուն վիզը չուան մը գրած՝ կը խեղ-
դէին:
— Լսեցի՛ր...
— Այո՛:
— Պիտի խղցնե՞ս քու խիղճդ:
— Ո՛չ...
— Պիտի ուրանա՞ս քու Աստուծոյդ:
— Ո՛չ:
— Պիտի մատնե՞ս քու հայրենիքդ:
— Ո՛չ:
— Գնա՛ ուրեմն... գնա՛ ու ձեռքերդ լուա՛:
Առաքել էֆէնտին կակազելով ջանաց երկու բառ
բերել քով քովի ու բռնել, սակայն չկրցաւ: Իր լե-
զուն բռնուած էր: Այդ պահուն անզգայ մըն էր
ինքը: Կայծեւ թէ չէր հասկնար եղելութիւնը:
Վերջապէս Վանական հրամայեց իրեն՝ որ իր
ճամբան շարունակէր:
— Առաքել էֆէնտին արագ արագ հեռացաւ:
— Ի՞նչու այդպէս ընել ուղեցիր, Լուսիա՛, հար-
ցուց Վանական:
— Որովհետեւ կը հաւատամ թէ այդ մարդը կա-
րող է բարի ըլլալ ու իր շարագործ ձեռքը դէպի
թշնամին ուղղել, պատասխանեց վեհանձն աղ-
ջիկը:
Վանական առարկութիւն մը չըրաւ:
Երկուքն ալ զիջեցուան մթութեանը մէջ անհե-
տացան:

ԴՊՐՈՑԻ ՎՐԱՅՈՒՔ

(Շար նախ քիւնն եւ չիւր)

Մենք պուկարիտ մէջ, կրթական ինքնաշարժի բնաւ չունինք. ո՞վ, ո՞ր մարմինը, որ գործը կը հասկնայ, պիտի կարող ըլլայ հսկելու դաստաւը. դո՞ւք ինչ, անոնց եղանակին եւ անոնց յառաջ բերած ու բերելիք արդիւնքին վրայ:

Այս հարցման վառնայի Պատ. Հոգաբարձութիւնը պարզամտօրէն պատասխանած է:

— Մտղքները...

Ո՛ւր, սա ծնողքներն որոնք այնքան միամիտ են ուսումնական գործին հանդէպ: Ձգեցէք սա Աստուծոյ արարածները, որ իւր տղուն դիպուած ամսականները երբ ուզուի, տրամադրուի կը հանէ ու... հրէա-ներու վարժարանը կուտայ, որովհետեւ ֆոնտանիստ վարժարան չունի թաղը: Անդին այնքան երես կուտայ գաղթական ուսուցիչ մը, որ սարի մը վերջը տեղւոյն, դասարանը կրտսիպուի գոնիակ իրտեր մը ունենայ այդ ուսուցչին նե կայութեանը: Ուրիշ տեղ մը՝ դպրոցէն ճամբուած ուրիշ քաղաքէն ուսուցչի մը համար, այնքան իրար կանցնին... որ «ոչ գիտեն զինչ գործուն»:

Երկար կըլլայ այս թուումները. եթէ փորձեմ շարունակել, ամենքնիս ալ եթէ ծնողք չենք, մեր ազգականներուն մէջ ծնողք ունինք, այսինքն անհատներ՝ դպրոցին առջեւ, որոնցմէ միմիայն ոգտուողները իրենք են:

Հաւատացէք, ամբողջ Պուկարիտ մէջ, անկարելի է գտնել տասը հայ ծնողքներ, որք կարող ըլլան կրթական տեսչի մը դպրոցավարութեան կամ դայն հակակշիռու ձեռնառն ըլլալ. որովհետեւ այդ բանը մասնաւոր ԱՐՀԵՍԾ մըն է, որ իրեն յատուկ մշակումը ունի:

Ուրեմն այս կազմութեան ու այս պայմաններուն մէջ ալ, երբ քննութիւնները կը վերցնէք, ուրիշ բան բրած չէք ըլլար, ո՞վ Պատ. Հոգաբարձութիւններ, բայց եթէ թողու որ մեր ուսումնական գործը աւելի

հաստատուն քայլերով ընթանայ ալա-ֆեհիսիէի իր շաւղին մէջ:

Ձեռն ատեն իսկ տանը մէջ թեթեւ հագուելի խիստ օգտակարէ մարդու այս կէտին վրայ բոլոր գիտնողները համակարծիք են, բայց միայն այն տուեալներուն մէջ կրնայ օգտակար ըլլալ սակայն, որ ֆալտիֆեռ կայ մեր տուեալներուն մէջ՝ այդ վիճակը ապահով եղէք թէ՛ քննութիւնի պիտի պատճառէ, որովհետեւ հիմա մանկալ կը վառենք դեռ:

Գիտեմ թէ սոյն տղերքուն դէմ մեր ուսուցիչներու ուժեղ բանակը պիտի զոտենմ, որ պիտի տրամաբանէ:

— Բանի որ կրթական գործէն հաղկող հայ չկայ, քննութիւնները տեղի ունեցած ատեն հակակշիռ գործը նորէն չպիտի գոհանայ...

Նախ որ քննութեան ներկայ զրտնութիւնը տարբեր բան է, դասախօսութեանց ներկայ գտնութիւնը տարբեր, վերջինին համար մասնաւոր արհեստ պէտք է, իսկ առաջինին համար նախնական ծանօթութիւնն ալ կը բաւէ:

Առանց երկար բարակ բացատրութեանց մտնելու, կը բաւէ մտաբերել տալ սա պարագան. չիտուելու վրայ եղող չէնք մը լաւութիւնը ճարտարապետ մը միայն կրնայ հաւելնայ, իսկ պարզ անհատը չէնք լմնալէն վերջը:

Այո՛, ծնողքները ու թաղին ուսումնական անձնաւորութիւնները՝ դասարան ներկայ գտնութիւնով չի պիտի կրնան այնքան հակակշիռ դերը կատարել, որքան քննութեանց ներկայ գտնութիւնով: Որովհետեւ տարեկան քննութեանց ատեն ամբողջութիւն մը իրենց պիտի ներկայացուի, որ հիշմէ՛ք զրեկը՝ չի վերցնէր այնքան, բայց դասախօսութեան ամբողջութիւնը ունեցած քննութիւն մը, ո՞վ յարգելի ուսուցիչներ, շատ լաւ գիտէք թէ որքան ջուր կրնայ վերցնել... Դուք որ այնքան լաւ կերպով տարեկան քննութեանց իսկ կրնաք ջուր վերցնել տալ... երբեմն:

Այդ բացատրութիւններով համոզուած եմ թէ՛ մեր ներկայ արդէն հաւորւող փնտռող չկայի այս պայմաններուն մէջ. տարեկան քննութիւններուն դպրոցներէն վերցուելու պարզա-

պէս կրթական ԱՂԵՏ մըն է, որուն վրայ պէտք է ամեն անհատ—երբ մանաւանդ Պուկարիտ մէջ կրթական սա մեր բոլորովին ինկած գործը բարձրացած տեսել կուզէ—ուշագրութեամբ մտածէ:

Քննութիւններուն վերցուելու աւելի վտանգաւոր կը գտնեմ ես յոյս հաւար, քան անոնցմէ առաջ եկած ֆիզիքական խաղաղութիւնները: Փառք Աստուծոյ, մեր դպրոցներու երկու երկու ամսներ վազանս ունին, յետոյ շարժուան մէջ կէս օր մըն ալ հանդիստ. տարեկան քննութիւնները որքան ալ յամառն աւերուէ մեր տղա-զոց ամբողջութիւնը, այդ երկայն արձակուրդները կը բաւեն այդ չարիքը լաւագոյնս զարմանելու: Ու յետոյ ամենքնիս ալ տարեկան քննութիւններ անցուցած ենք, բայց ասոր համար չէ որ... անկեմիք ենք:

Ու յետոյ, ո՞վ Պատ. Հոգաբարձութիւն վառնայի, դեռ մեր երկրին կառավարութիւնը իսկ իր նախակրթականներէն... չէ վերուցած քննութիւնները: (Կիմապիտաներէն միայն վերցուած են. այն ալ գեռ այս տարի) Այդքան ճապարհու պէտք չունինք մանաւանդ անանկ փափուկ խնդրոյ մը մէջ, որ մեր բոլորին տեսածէն ու գիտցածէն չա՛տ, խիստ շատ վեր ու բարձր խնդիր մըն է:

Բայց ինչ որ ամեն ողջամիտ թաղական խորհուրդներ եւ ամենեւան զուէն հոգաբարձութիւններ պէտք են աճապարել ընելու, այն ալ պուկարահայ գաղութին օրինաւոր կազմակերպութիւն մը տայն է, ինչպէս Ամերիկայի մերիները կը փոխեն ընելու ռեժիմը կեդրոնով մը Առաջնորդի մը ձեռքին տակ, ստեղծել մեր ազգային գործերուն մէջ ինքնաշարժի մը, ուրկէ ծնունդ պիտի առնէ կրթական ինքնաշարժը, ու կրթական ինքնաշարժին ալ մեր կրթական խորհուրդը, ու անկէ կրթական տեսուչը, յետոյ անօրէնը ու ասոնցմէ ալ գիտակից ուսուցիչները որ ատեն եթէ վարժապետանոցներէ ելած ալ չըլլան, անոնց դոնէ իւրաքանչիւրը պիտի ստիպուի մէյմէկ եւրոպական մանկավարժական թերթերու բաժանորդ ըլլալ ինքնօգնութեամբ սնուելու համար բոլոր այն

բաները, զորս իրենց պաշտօնը չբարեւոր կը պահանջէ:

Կերեւայ թէ «Իրթորի» մը վրայ խոսեցայ սա վերջին տղերքուն մէջ. բայց ինչ որ «Իրթորի» չկրնար ըլլալ, ան աղանձաւ սա ճիշդն է, զոր պէտք է ունենան բոլոր հոգաբարձութիւնները: Այն է ուսուցչներուն աշխուր բարձրացնել. 120 ֆրանք որ այսօր պուկարիտ մէջ ամսականի մագիլովը քանակն է. պէտք է միմիայն ըլլայ ատիկայ, որ ատեն ինքնին բարւոքութիւնով մեր ուսուցչութիւնը, ու գործին մէջ պարտաճանչութիւնը եւ իսկաւր հզօր ծառով մը մտնելով, ուսուցչական ժողովները չպիտի ծնունդ տան անանկ կանխակալ եւ հետեւաբար ապախոս որոշումներու որոնց փայլուն երեւոյթի տակ, կրթական գործին խոշոր հարուած մը կայ պահուած:

ՀԱՅ ՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին տարիներու մէջ ուսումնականութիւնը ընդունող հայերուն ուս կառավարութիւնը երկու գիւղ յատկացուցած է. Ալեքսանդրովի և Ագին. Զարը 5000ական բուսիկ նուիրած է այդ գիւղերուն եկեղեցիի և դպրոցի համար:

— Կաշկազ թերթին մէջ տեսնուած ուս քահանայի մը մէկ յօդուածէն հետեւեալ հատուածը աշագրաւ է.

«Հայերու դէպի ուսումնականութիւն շարժումը սկսած է ասկէ 20 տարի առաջ. այդ շարժումը կենդանի է, զօրեղ է այժմ. Բայց ուսումնական հայերը նեղ վիճակի մէջ են. որովհետեւ անոնք իրենց նախնի հաւատակիցներուն բնական գիւղերուն մէջ կը մնան և անոնց կողմէ ամեն կերպով կարհամարհուին. եթէ այս պէս չըլլայ, ուսումնականութեան

ԽՈՐՀՐԴԱԿՈՐ ՏՈՒՆԸ

Վանայ Այգեւստան կոչուած գեղեցիկ արուարձանին մէկ անշուք ու ամալի անկիւնը, գրեթէ բարձր ու պալատի մը պէս չէնքերէ հեռու, տուն մը կար, որուն ետին ընդարձակ պարտէզ մը կը տարածուէր՝ հինաւուրց ծառերով չրջապատուած:

Այս տունը մէկ յարկի վրայ եւ տեղ տեղ փոխկած ու խարխուլ վիճակի մը մէջ կը մնար:

Անոր տէրը ժամանակով քաղաքին ամենէն հաւրուստ ու ամենէն աղքատիկ մարդն էր: Բայց այսօր մէկը չէր մնացեր այդ գերդաստանին շատաւիղիներէն, որ վառած պահէր տունին ճրագը. միայն թէ պառաւ կին մը կապէր հոն, որ խնամակալ ծերունիի մը որդեգիրն էր:

Պառաւ կինը քսաներկու տարիներէ ի վեր այրի կը մնար: Մէկ հաս զաւակ մը ունեցած էր, որուն յիշատակովը կապէր, առանց անկից լուր մը տեսնելու թէ՛ կենդանի էր:

Չափազանց առանձնամոլ ու լուրջ բնաւորութիւն մը ունէր այդ ութսունն անցած պառաւ կինը: Ծառ անգամ դուրս կելիէր ու բնաւ չէր ուղէր որ դրացուհիներն իր տունը յաճախէին: Այդ պատճառաւ, թաղին կնիկներն իրարու կը փոփայային, երբ անոր դուրս ելնելը տեսնէին:

— Վայ... ճապին է... դուրս է ելնիք...

Բայց, եթէ այս խօսքերն իր ականջին ալ հասնէին, զարձեալ չըսելու կը զարնէր ու բնաւ չէր վրդովուէր:

Օր մը, վերջապէս մարելու մօտ, մուրացկանի

մը հագուստով բարձրահասակ մարդ մը քանդուած չըջափակէն պարտէզը մտնելով ուղղակի պառաւին անհեկին դուռը զարկաւ:

Պառաւը միթմրթմրով դուռը բացաւ եւ մուրացկանին հարցուց.

— Ի՞նչ կուզես...

— Ո՛հ, սիրելի մամիկ, եկած եմ քեզմէ բան մը խնդրելու, միմիջեց մուրացկանն, որ ներսէս Արծրունին էր:

— Ի՞նչ բան... միմուց պառաւը՝ դժգոհ ու կասկածաւոր ձայնով մը:

— Նախ շատ յոգնած եմ, կարելի չէ՞ ամոռ մը տաս ինծի որ նստիմ, նկատել տուաւ ներսէս Արծրունին:

— Ես ուսկի՞ց ամոռ պիտի բերեմ քեզի... ըսէ՛ խնդրածդ ու գնա՛, առարկեց պառաւը պարզ ու մերժողական ձեւով մը:

— Հոգ չէ՛, մամիկ, մի՛ նեղուիր... Աստուած քեզի այս տունը տուել է որ դուն ալ ինծի ամոռ մը տաս հաղիւցելու:

Նեղուիր մամիկը տրտնջելով ներս գնաց ու խախաւ ամոռ մը բերաւ: Ներսէս Արծրունին կամայ մը անոր վրայ նստեցաւ որ չկոտորէր:

— Է՛յ, ըսէ՛ նայիմ, ի՞նչ կուզես, ընդհատեց պառաւը:

— Կը խնդրէի որ բոս թէ այս տունին մէջ ո՞վ կայ քննէ զատ, հարցուց ներսէս Արծրունին:

— Մէկը չկայ, պատասխանեց պառաւը:

— Մի՛նակ ես:

— Մի՛նակ եմ:

— Պանդխտութեան դացած մէկն ալ չունի՞ս:

— Ունի՞մ... թոթովեց պառաւ մամիկն, որուն սքտին մէջ ժանգոտած երկաթի կտոր մը մխուցաւ կարծես:

— Ամուսինդ է:

— Ո՛հ, մէկ հատիկ որդիս է:

— Որդի՞դ:

— Այո՛:

— Գիտե՞ս ո՛ւր կը գտնուի:

— Ա՛խ, չեմ գիտեր... լուր մը առած չեմ իրմէն. հառաչեց պառաւ կինը՝ չկրնալով զսպել իր աչքերու արցունքը:

— Վա՛նի՞ տարի է որ բաժնուած է քեզի:

— Ի՞նչ ըսեմ... քսանեւհինգ տարիէն աւելի է:

— Այդ քսանեւհինգ տարուան մէջ բնաւ լուր մը չառի՞ր իրմէն:

— Ամենեւե՛ն:

— Անունն ի՞նչ է:

— Կամարական:

— Մականո՞ւնը:

— Սուրենեան:

Ներսէս Արծրունին խորունկ մտածումի մը մէջ ինկաւ: Յիշողութեան տոջին ջանաց բերել Պատրիկի խուճերն ընկերացող մարդ մը, որմէ անորոշ պատմութիւն մը լսած էր միայն:

— Չեմ գիտե՛ր, մամիկ, պիտի հաւատաս ինծի, երբ որ ըսեմ թէ որդիդ կը ճանչնամ ես, ըստ ներսէս Արծրունին:

(Շարունակելի)

շարժումը լայն ալիքներով կը տա-
րածուի Երեւանի նահանգին մէջ:
Հասարակ ժողովուրդը տարբերու-
թիւն չգնէր հայ-լուսաւորչակա
նութեան և ուսաւորչականութեան
մէջ, իրաւ ալ մեծ տարբերութիւն
մը չկայ:

«Անդունդ փորել ուզողներն են
քաղաքականութեան հետեւող տար-
րերը, գլխաւորապէս ուսնալները,
բայց ժողովուրդը անոնց հետ գործ
չունի»:

— Գանձակի Արմաւիր գիւղին
հարսանիքի մը մէջ գինովութեան
ատեն, երկու հայեր դաշոյնով ի-
րարու կատակ ընել սկսած են,
բայց վերջապէս մէկին աղիքը
դուրս թափուելով վերջացած է
այդ անխոհեմ կատակը:

— Պոլսեցի գաղթականներէն
երկու հայ ձկնորսներ. երկուքն ալ
Պետրոս անունով, չորեքշաբթի օր
ժամը 3ին քաղաքիս նաւամատոյ-
ցէն մակոյկով որսի կը մեկնին.
բայց 50 վարկեան վերջ յանկարծ
սկսած փոթորիկը կանհետացնէ
երկու հայերը. իսկ մակոյկը կը
գտնուի հետեւեալ օրը ջախջախ-
ուած քաղաքիս գիմացը Ղալա-
թիայի մօտիկ Զուգուր Համամ
կոչուած եզերքը:

ՀԱՎԱՍՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Դ Ի Ա

Մաքէթնիս վիլայէթիւնէն ու-
մուս միւլիթիւնը իւնիսնը իւլ Ժե-
նէրալ Հիւսի բաշա Սուլթանըն
հուզուրընա գապուլ օլընտըգոտան
սօնրա, իւլ քեթիպլէր ըէֆա.
գաթը իւլ Սէլանիկէ կիթմէք
իւզըն Սթանպուլուս հարէքէթ
իթմիշ տիր:

— Սուլթան ալըման էլիսի պա-
րօն Մարշալ իւլ Մաքէթնիս մէ-
սէլսինտէն տօլալը կէօրիշտի. ք.
տէն վէ անըն զանն ու էֆքեա-
ընը անլաւտըգոտան սօնրա, պիր
իւրտէ իւլտէ՝ Մաքէթնիսըն
հարպիյէնէ էհէմմիլէթի օլան մա-
հէլլէրտէ, եանի Օհրիտա, Բէր-
լէրէ, Հօրիւնա, Քիւրցօպօ վէ Գաս-
թօրիա ճիւղարընտա պիօքսիւսար (*)
եաբըլմասընը էմր իթմիշ տիր:

— Իսլահաթ գօմիսիօնը Հիւսի
բաշանըն ըէյասէթի իւլ Սէլանիկէ
եէթիշմիշ տիր. իշպու գօմիսիօն.
տա հիշ պիր խրիստիան եօգ տըր:

— Միթրօվիցատա բոս գօմսօ
լօսլըլը թէսիս իթտիթմէք իշիւն
իսթիւլ գալտըրմըշ օլան Արնա.
վուտ իսսա Պօլիթիկանց թահսէլ

(*) Պրօֆու թապիր օլընը՝ եէնի
հարպիյէ ուսուլի իւզըն՝ եաբըլմագոտ
օլան էթրաֆը տէմիր գապուլ ուֆադ
գուլլէր. պուլար պիր պիրիստէն
100-150 մէթր իրադ եաբըլուպ, գա-
լըն տէմիր թէլլէրէ պաղլանըրլար,
վէ տիւլմանըն կէշմէսինի պու եօլլէ
մէնն իթմիշ օլուրլար:

հըֆա Սթանպուլու կէթիւրիւպ,
տօղրու Երեւոզ սէրայընա կիթ.
միշ տիր:

— Մաքէթնիստան Պէլկուտա
վէրիլէն մալիւպթա կէօրէ, Ար-
նապուտար էլ ան իսթիւլ գալ-
տըրմագոտա վէ ճէպրէն բարտալ-
մագոտա ըմրշար:

— Ահէմիստան սինօրը իւզէրին.
տէ Գիւրտէրին խէպասէթլէրին.
տէն տօլալը տէմ էլիսի Պասպր
Ալիէ բօթլէսթ իտուպ, լազըմ
կէլէն թէպպիրլէրին էլէ ալընմա
սընը թալէպ իթմիշ տիր:

— Երուսաղէմտէ գօրէլա գու-
հուր իթմէսի սէպէպլէ հաճրար
կիտէմէտիքլէրինտէն, օրանըն բուս
բաթրիգի բարաճա սըգընթըտա
պուլընարագ, Սթանպուլ բաթրիգ-
հանէսինտէն իսնէ իսթմիշ վէ
3,000 լիրա գապուլ իթմիշ տիր:

— Տամատ Մահմուտ բաշա ճէ-
րիտէլէրէ պիր թէքքիպնամէ եօլ-
լալուպ, քէնտիսին. իքի մախտուս.
լարը իւլ՝ եազընէն Սթանպուլա
կիտէմէքլէրինտէն տալիր չըգմըշ օ-
լան շայէնըն էսասըլ օլտըղընը
իւնն իթմիշ տիր:

— Սուլթան միւստէթ սիւրիւն-
մէքտէ օլան պիր թագըմ տալա-
լարըն կիւն էվլէլ ըուլլէթ օլընմա-
սընը, վէ նիլգամա մուղալիր վէ
իլիմիշ օլան հիւքմ ու իլալարըն
Ֆէսիս իւլ եէնիտէն մուհաքէմէ ի-
տիլմէսինի բուս էլիսի Պասպր Ալի.
տէն թալէպ իթմիշ վէ պիր լիսթա
վէրմիշ տիր:

Յ Ր Ա Ն Ս Ա

Կէշէն ճուսա էրթէսի կիւնիւ
Ֆրանսանըն մէքիսի մէպուսանըն.
տա շէտիտ միւստէլէր գուհու-
րա կէլմիշ տիր: Մէպուսանտան
Կօհիէ՝ մէշհուր տօլանտըրընը Հիւս.
պէր ֆաթիլիա ազալարընը գաշ
մալարընա մէյտան վէրիլմէսինտէն
տօլալը հիւքիմէթի մուսալէզէ
իթմէքլէ շէտիտ լիսան գուլլանտը.
Պոնըն իւզէրինէ աստիլէ նազրըր
քիւրսիտէն էնտի. անըն եէրինէ
մէպուսանտա Մ. Գուլթան քիւր-
սիւյէ չըգմագ իւզըն էքէն, պազը
մէպուսար անը ճէպրէն աշպը
չէքտիլէր վէ պիր վէլլէլէ տիր
գօթը. հէրքէս պիշ պիրինէ գա-
րըշտը, եուսուրըլար վէ թէքմէ-
լէրլէ պիր պիրլէրին թէքէլմէյէ
պաշալտըլար, բուպալար երթըր-
տը. Մ. Գուլթան քիւֆիւրէ տէ-
վամ իթտի վէ Մ. Սիվըթօն աս-
տիլէ նազըրընը իւզէրինէ հիւքիւ
իւլ «էն պիր չաքըն պիր եա-
լաճըն» տէտի. նազըր իսէ չան.
թասը իւլ մէրգուլըն պաշընա
վուրտու. Պազըլար չու իքի բէհ-
լիվանլարը ալըրմայա գօշտըլար:

Նիհայէթ օն տագիգա գատար
գապկա տէվամ իթտի: Բէյիս Մ.
Պուրթուս մէքիսի գաբատը. Սա-
միւնա (ուկնգիր) մախտուս մէվ
գըլարտա էհալի տալի տահա շէ-
տիտ սուրէթտէ պիր պիրինի թէ-
բէլմէքտէ իտիլէր. նիհայէթ աս-
քէր եէթիշուպ էհալի տըշարը
չըգարտը:

Ելէմէքտէ իտիլէր. նիհայէթ աս-
քէր եէթիշուպ էհալի տըշարը
չըգարտը:

Մէքիս թէքար աշպուսանտա
Մ. Սիվըթօն հիւքիմէթէ գարչը
իթտիկի հագրէթի կէրի ալմ-
լուպ հիւքիմէթտէն իքրաճ՝ պէ-
լան իթտի: Պոնըն իւզէրինէ՝
բարլըմանըն գուլլէլ գապրթասը
վաթթասը իւլ Մ. Մ. Գուլթան
վէ Սիվըթօն սալօնտան տըշարը
չըգարտըլար վէ սիւքիւնէթ հիւքմ
իթտի:

Շու կիպի հալլէրին վուգուս
կէլմէսի Բարլըման ուսուլիէն նա-
մուս կէթիլմէլէնէլի կիպի, թիւր-
քիա վէ Բուսիա միսիլիւ հիւքիւ
մէթի մուլազա ուսուլի իւլ ի-
տարէ օլընտան տէօվլէթլէրին բէս-
մի կազէթալարը տիլլէրինի պիրլէր
մէթրօ տահա ուզալմայա մէյտան
պլլըրլար:

Ր Ո Ւ Ս Ի Ա

Օտէսա Տարիլֆինուրն (հա-
մուսարան) սապրգ մէմուրլարըն.
տան պիրի սէրհօլըլընտան տօ-
լալը մէմուրիլէթիտէն չըգարը-
տըլը սէպէպլէ հիտտէթլէնուպ,
ինթիգամ ալմագ իշիւն կիճէ պիր
թարաֆուս Տարիլֆինուրնա կի-
րէրէք, պիր սալօնըն ալթընտան
ալթէլ վէլմիշ վէ ալէֆ ալտըգոտան
սօնրա օրատա քէնտիքէնտիսինի
ասմըշ: Իսկիլիգ կազէթալարըն
պէլանընտ պիւնալէն ալթէլ գօյան
պիր Նիլիսիս իթմիշ:

— Բօսթօվտա վէ տիկէր սլմա-
սիօնլարտա իշիլլէրին գարըշըգ
ըլըլը պիր գաշ կիւն տէվամ իթ-
տի: Իշի Թաթիլ իտէն իշիլլէր
իշիլլէրին իւզէրինէ հիւքուս
իթտիլէր: Աքէր եէթիշուպ գա-
րըշըլըլը թէքքին իթտի. իշի-
լէրտէն չօղլար թէվգըֆ օլընտը-
լար վէ 60 իշի սիւրկիւնէ կէօն.
տէրիլտիլէր:

Ր Ո Ւ Ս Ա Ն Ի Ա

Բուսանիսնըն մալիյէ նազրըր
1903—1904 սէնէսի իշիւն մէքիսի
մէպուսանա թագտիմ իթտիկի
պիւստէնէ 225 միլիօն 117000 ֆր.
վարիտաթ վէ 218 1/2 միլիօն ֆր.
մէսարիֆաթ կէօսթէրմիշ, եաէի
6 1/2 միլիօն հասըլաթ արթաճագ:

Ս Ե Ր Պ Ի Ա

Եէնի թէշքիլ օլընտան վիւքէլա
նըն բօթլարմը տէյօր քի՝ Սեր-
պիանըն մէնֆաթը իշիւն՝ հիւ-
քիւմէթ չլըշաճագ պիւթիւն պլօ-
լիւք տէվլէթլէթլէր վէ սալիր
հիւքիւմէթլէր իւլ հիւսնի միւնա.
սէպալթա պուլլընմայա, պախու-
սուս Բուսիա իւլ գարտաշ. նէ
միւնասէպալթընը արթըրաճագ վէ
Աւստրիա իւլ անը միւնասէպա-
լթը գուլլէթլէտիլլէնէք, զիրա
պուլնուլէ գօշչուլըգոտան նաշի՝
միւթէտտիտ պաղլարը վարտըր:

— Մաքէթնիս իշիւն իւնն օ-
լընտ իսլահաթա էհէմմիլէթ վէ-
րիլմէյուպ, իւլ պահար իշիւն

Սըրպար վէ Պուլկարլար պէյին.
լէրինտէ իթթիֆագ հասըլ իթ-
մէքտէ օլտըգուրը, վէ չու կիւն.
լէրտէ օթուզ գատար պուլկար մէ-
պուսար, մուհարրիլէր վէ ար-
թիսթլէր Պէլկուտա պուլընտըգ-
լարը վէ սուրէթի սաթիմանէտէ
գապուլ օլընտըգուրը մահէլինտէն
պիւտիլիմիշ տիր:

Մ Ի Ի Թ Ե Ն Է Վ Լ Ե Թ Է

Իսկիլլէրանըն միւսթէմէքաթ
նազըրը Մ. Շամպէլլին. Մարսը-
տան կէլմէքտէ իքէն խտիվտէն
գալուլ օլընմըշ տըր:

— Սպանիանըն Պէրսըլօն շէհ-
րինտէ իւլ անարշիսթ բօթալանտ
իշիւն բէսալլէր տաղթմագոտա ի-
քէն տէրտէթ օլընտար:

Թ Ի Ի Ճ Ճ Ա Ր Ի Յ Է

ՎԱՌՆԱ, 29 Նոյեմբեր	
ԶԱՆԻՐԷ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն Լիպ. 57-58 հ.թ. 9.40/10.-	
Արապա լիպ. 53-62 հ.թ. 9.- / 10.50	
ԱՐԱՎԱ	
Վալօն 100 քիւ 9.80/10.10	
Արապա 45-50 լիպ. հ.թ. 6.- / 6.40	
ԶԱՎՏԱՐ	
Վալօն 53-54 լիպ. 7.80/8.-	
Արապա 8.- / 8.40	
ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիւ 18.- / 24.-	
ԵՌԻԼԱՅ	
Վալօն 100 քիւ 10.80/11.-	
Արապա հէ.թ. 5.40/5.50	
ՄԻՍԻՐ	
Վալօն լիպ. 56-57 հէ.թ. 8.- / 8.20	
Արապա լիպ. 56-57 հ.թ. 8.- / 8.40	
ՏԱՐԸ	
Վալօն 100 քիւ 9.- / 9.10	
Կիւնտէ 50.60 արապա վէ 25-30	
Վալօն կէլմէքտէ տիր:	
Վալօն մուսթէլէսի ալթուն ֆը- րանքլէ, արապա կիւմիշլէ, նաթ- լէտ 20.40 ֆրանք:	



Ի Ր Ա Ն

Երանանըն եէնի վաթօր գուլթանեա-
սընըն վաթօրլարը հէր բազար էրթէսի
կիւնլէր լիմանըմըլա միւսթէլլէթ ի-
տուպ, սալը կիւնի պուրատան հարէ-
քէթ իտիլլէր: Սթանպուլ, Չանաք-
Գալլէ, Բիւքէսա, Բաղրասա վէ
Քօրֆուլա օղրալարագ՝ Այ-Սարանտայա
գատար կիտէյօր: Եօլըլար Բիւքէսա՝
Ալէքսանտրիա, Մարսիլիա վէ Ամե-
րիկա իշիւն աթթարմա օլապիլիլէր:

Վարարլարըմըլըն պէօյիլլէրիլ, թէ-
միլլիկի վէ չաթուզըլը վէ Եօլըլա-
րըն րահաթըլը իշիւն կէօսթէրիլլէն
նէգաքէթ ճիւլլէյէ մալիւս օլուպ
թագտիր օլընմագոտա տըր: չիմտի ֆի-
յաթլարըն էվլէրիլլէրտէ սալ վէ
զայրէթ իթտիկիմիգ կիպի շէհաթթը
մէթթէլլէր իւլ կէլէն ֆուգարալարա
մուսթէլլէր իտէլէկիմիլի վատ վէ ի-
լան իտէրիլլէր:

Բաղպէթիլի միւլթէրիլլէրիմիլ տալի
ֆրանսաթտան իսթիֆատէ իտէրէք,
պիրինճի ուլասթըգոտա, իսկէլլէտէ
Մանիսթրի սօգաղընտ 396 նօմթըլը
եազըլտանմիլ վէ թէշիթ պուլուրա-
ճագարընը իսթի իտէրիլլէր:

Մէքքիւր վաթօր գուլթանեանըն ա-
ճէնթի՝ Ղ. ԼՈՒԼՈՒՏՕՐՈՒԼՕ

ՍՐԱՀ "ՍԱՆԴՐԱԼ"

Այս գիշեր նաշիւսա խմբին կող-
մանէ պիտի ներկայացուի ԹԵՆԵԴ
կամ ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՅՐԵՐԸ թատեր-
գութիւնը 6 արար:

Ծիծաղաշարժ գուլթա 1 արար:

Одговорникъ Н. Драгуловъ
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна